

## Ալեքսանդր Սարգսյան

### ԱՅԼԱԽՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր - ԽՍՀՄ, ՀԽՍՀ, քաղաքական ընդդիմություն, ընդդիմադիր գործունեություն, այլախոհական շարժում, ազգային-ազատագրական շարժում, իրավապաշտպանական շարժում, ինքնահրատ:

Խորհրդային Հայաստանում քաղաքական ընդդիմության ձևավորման գործընթացի սկիզբ կարելի է համարել նախորդ դարի 60-ական թվականները: Ճիշտ է, ԽՍՀՄ գոյության ողջ ընթացքում, անգամ ստալինյան բռնաճնշումների տարիներին, եղել են ընդդիմության դրսևորումներ, սակայն հենց 60-ականները նշանավորվեցին հասարակական-քաղաքական մտքի բուռն վերելքով: Այդ ժամանակաշրջանում Խորհրդային Միության<sup>1</sup>, այդ թվում նաև ՀԽՍՀ տարածքում երևան եկան առաջին այլախոհական քաղաքական կազմակերպությունները<sup>2</sup>, որոնք ունեին կազմակերպական ցանցեր, հստակ նպատակ, Ազգային միացյալ կուսակցության դեպքում՝ նաև կանոնադրություն, ծրագիր<sup>3</sup>: Եվ եթե ժողովրդավարական գործընթացների սկզբնակետը մի շարք եվրոպական և հարավամերիկյան երկրներում կարելի է համարել ավտորիտար վարչակարգերի քայքայում կամ փլուզում<sup>4</sup>, ապա Հայաստանում, ինչպես նաև ամբողջ ԽՍՀՄ տարածքում, այդ գործընթացները սկիզբ առան վարչակարգի կողմից հասարակության ամբողջական վերահսկողության համեմատաբար նվազեցման հետևանքով: Առաջին սաղմերը երևան եկան Խրուշչովի կառավարման շրջանում, երբ Ստալինի մահից հետո քննադատության ենթարկվեց անձի պաշտամունքը, մեղմացան հետապնդումները Խորհրդային Միության քաղաքացիների նկատմամբ<sup>5</sup>: Այս երևույթը սկիզբ դրեց վերջիններիս շրջանում քաղաքական և քաղաքացիական ակտիվությանը:

Դասակարգելով 1960-1970 թվականներին ԽՍՀՄ-ում ընդդիմադիր գործունեության դրսևորման մոդելները՝ Ֆ. Բերգհուրնը դրանք բաժանում է երեք տիպի՝

\* Քանի որ ԽՍՀՄ ամբողջատիրական վարչակարգում քաղաքական ընդդիմության գոյությունը բացառված էր, այստեղ

«ընդդիմություն» տերմինը կիրառելիս նկատի ունենք հակահամակարգային ընդդիմադիր շարժումները:

<sup>1</sup>Տե՛ս **Афанасьева Л.** Из истории оппозиционной общественной мысли в СССР (1950-е – первая половина 1980-х годов), «Вестник РГГУ», №4, 2012, с. 153-154:

<sup>2</sup>Տե՛ս **Ա. Մանուկյան** Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Եր., 2005, էջ 31-56:

<sup>3</sup>Տե՛ս նույն տեղը, էջ 101:

<sup>4</sup>Տե՛ս **Խ. Լինց, Ա. Ստեփան**, ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա, Եր., 2011, էջ 125, 205, 309:

<sup>5</sup>Տե՛ս **Енвоян А.** Идеологические основы социально-политических трансформации в постсоветской Армении, Ереван, 2011, с. 110:

խմբային, ոլորտային և կործանարար<sup>1</sup>: Խմբային ընդդիմության տակ նկատի են առնվում Կոմունիստական կուսակցության այն անդամները, որոնք փորձում էին փոխել կուսակցության վերին շրջանակների կազմը կամ Խորհրդային Միության քաղաքականության առանձին ասպեկտները: Ոլորտային ընդդիմություն էին կազմում այն փորձագետներն ու մասնագետները, որոնց նպատակը մասնագիտական և ինստիտուցիոնալ առանձին խմբերի շահերի պաշտպանությունն էր<sup>2</sup>: Այս երկու տիպերը, որոշ վերապահումներով, կարելի է դասել համակարգային ընդդիմության շարքը: Իսկ ահա երրորդ տիպը՝ քայքայիչ ընդդիմությունը, բնութագրվում է որպես ոչ համակարգային: Վերջինիս վերագրվում են այլախոհական շարժումները:

Կուսակցության ղեկավարի փոփոխությունը ԽՍՀՄ-ում 1964 թվականի աշնանը մեծ ազդեցություն ունեցավ այլախոհական շարժումների վրա: Բրեժնևի վարած քաղաքականությունը վերջ դրեց Խրուշչովյան «ծնհալին» և ստալինյան ժամանակաշրջանի վերաբերյալ բաց քննարկումներին: Խրուշչովյան «ծնհալը» այլախոհական շարժումների ներկայացուցիչների գիտակցության մեջ արմատավորեց այն գաղափարը, որ հասարակության բարեփոխումների հնարավոր է հասնել իշխանության նկատմամբ հետևողական ճնշումներով: Այս շարժումների ձևավորման համար կարևոր էր նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն ստալինյան շրջանի, իշխանությունները զերծ էին մնում համատարած կոշտ բռնաճնշումներից: Հասարակությանն ահաբեկելու ծայրահեղ գործողությունները դիտվում էին համակարգի համար կործանարար: Այդ պատճառով այս շարժումները ճնշելու նպատակով հիմնականում կիրառվում էին ավելի մեղմ մեթոդներ:

Այլախոհական շարժումները միատարր չէին: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Մանուկյանը, այլախոհությունը, ըստ էության, միավորում էր միայն նրանց հասարակական կեցվածքը, քանի որ այդ շարժումներում ընդգրկված մարդիկ ունեին ինչպես անարխիստական ու միապետական, այնպես էլ ազգայնական հայացքներ<sup>3</sup>: Տարբեր էին նաև այլախոհական շարժումների գախափարական հոսանքները և գործունեության ոլորտները: Գ. Բարաշկովը առանձնացնում է այլախոհական շարժումների երեք ուղղություն՝ 1) կրոնաազգայնական, որի հիմքում ռուս ազգի հոգևոր վերածննդի գաղափարն էր (Ա. Սոլժենիցին), 2) ազատական-ժողովրդավարական, որի ամենավառ ներկայացուցիչներից էր Ա. Սախարովը, 3) մարքսիստական-

<sup>1</sup>Տե՛ս **Barghoorn F.** Factional, Sectoral and Subversive Opposition in Soviet Politics// Regimes and Opposition, ed. by R. Dahl, New Haven, Yale University Press, 1973, p. 39.

<sup>2</sup>Տե՛ս նույն տեղը, էջ 53, 57:

<sup>3</sup>Տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 31:

կոմունիստական, որի ներկայացուցիչներն էին պատմաբան Ռ. Մեդվեդևի համախոհները<sup>1</sup>:

Մեր կարծիքով, այս դասակարգմանը անհրաժեշտ է ավելացնել ևս մեկ ուղղություն, որը նույնպես ազգայնական բնույթ ուներ: Սակայն վերջինս էապես տարբերվում է Սովետիցինի ազգայնականությունից, անգամ դրան հակընդդեմ գաղափարախոսություն էր: Չորրորդ ուղղության առկայությունը բխում էր խորհրդային կայսրության բնույթից, հատկապես կովկասյան և արևելաեվրոպական հանրապետություններում առկա ազգային-ազատագրական շարժումների ավանդույթներից և հասարակության մի հատվածի շրջանում ԽՍՀՄ-ը որպես գաղութարար երկիր ընկալելուց: Եթե սովետիցինյան ազգայնականությունը առաջ է քաշում ռուսական ազգի հոգևոր վերածնունդի գաղափարը<sup>2</sup>, ապա կովկասյան և արևելաեվրոպական երկրներում ազգայնական տրամադրությունները հանդես էին գալիս անկախ պետականության ձևավորման գաղափարով<sup>3</sup>: Այստեղ դրսևորվում է ազգային գաղափարախոսության նվաճողական և պաշտպանական տարբերությունները<sup>4</sup>:

ԽՍՀՄ-ում այլախոհության դրսևորումների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում իրավապաշտպանական շարժումը, որի սկզբնավորման առիթ դարձավ 1965 թվականին գրողներ Ա. Սինյավսկու և Յու. Դանիելի համատեղ աշխատությունը՝ «Ջրոսանքներ Պուշկինի հետ», որը տպագրվել էր արտերկրում: Դրան հետևեց խորհրդային իրավապահների կոշտ արձագանքը՝ հեղինակների ձերբակալությունն ու դատավարությունը: Սինյավսկուն և Դանիելին աջակցելու նպատակով մի խումբ մարդիկ (մոտ 200) դեկտեմբերի 5-ին՝ ԽՍՀՄ սահմանադրության օրը, «Հարգեք խորհրդային սահմանադրությունը» և «պահանջում ենք Սինյավսկու և Դանիելի հրապարակային դատավարություն» կարգախոսներով դուրս եկան Մոսկվայի Պուշկինի հրապարակ<sup>5</sup>: Այս շարժման կարևորությունն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ առաջին անգամ կոչ էր արվում խորհրդային իշխանություններին հարգել և իրականացնել սեփական օրենքները, ինչպես նաև զերծ մնալ բռնություններից:

Հայաստանում առավել կազմակերպված և ցայտուն դրսևորվեցին ազգայնական տրամադրությունները: Պատմական հայրենիքի կորստյան, անկախ պետականության վերականգնման, Հայոց ցեղասպանության հատուցման և Արցախի ու Նախիջևանի հիմնախնդիրների արդարացի հանգուցալուծման գաղափարները խորհրդային

<sup>1</sup>Տե՛ս **Баршаков Б.** Диссидентское движение в СССР (1960-1970-е годы), «Известия Саратовского университета», 2007, №1, том 7, с. 103:

<sup>2</sup>Տե՛ս նույնը:

<sup>3</sup>Տե՛ս **Алексеева Л.** История инакомыслия в СССР: новейший период, 3-е изд., Москва, Московская Хельсинкская группа, 2012, с. 7-88:

<sup>4</sup>Տե՛ս **Հ.Մանուչարյան**, Ազգային գաղափարախոսություն, «Քաղաքագիտություն», Երևան, ԵՊՀ հրատ, 2006, էջ 543-576:

<sup>5</sup>Տե՛ս **Стрелец М.** Провозащитные движение в СССР в эпоху Л.И. Брежнева: некоторые аспекты истории, «Вестник РГУ им. С.А. Есенина», 2013, №3 (40), с. 78:

Հայաստանում այլախոհական կազմակերպությունների ձևավորման հիմք հանդիսացան, որոնց նպատակը ազատ, անկախ և միացյալ հայրենիքի տեսլականն էր:

1960-ականների ազգային գաղափարների զարթոնքին մեծապես նպաստեց 1965 թվականի ապրիլի 24-ին տեղի ունեցած ցույցը՝ նվիրված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին: Այս ինքնաբուխ ցույցը ԽՍՀՄ-ում հետպատերազմյան տարիների առաջին զանգվածային ելույթն էր: Ցույցի մասնակիցների հիմնական նպատակներից էր կորուսյալ հայրենիքի տարածքների վերադարձի հարցը, որը հայոց լեզվի պահպանման և Ցեղասպանության հիշատակի օրը նշելու հետ մեկտեղ՝ ընկած էր «Հայ երիտասարդական միություն» (ՀԵՄ) կազմակերպության գաղափարների հիմքում: ՀԵՄ-ը առաջին այլախոհական կազմակերպություններից էր խորհրդային Հայաստանի տարածքում, որը, սակայն, չունեւ ձևավորված կազմակերպչական կառույցներ, կանոնադրություն և գրավոր շարադրված ծրագիր: Այս կազմակերպության անդամները ձերբակալվեցին և տարբեր տարիների ազատազրկման դատապարտվեցին<sup>1</sup>:

1960-ականների այլախոհական շարժումների շարքում առանձնակի տեղ է գրավում 1965 թվականին ձևավորված «Հանուն հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը, որի նպատակներն էին Արցախի, Նախիջևանի, ինչպես նաև Թուրքիայի տարածքում գտնվող՝ Արևելյան Հայաստանի հողերի միավորումը ՀԽՍՀ-ին, հայոց լեզվի անաղարտությունը և հայերենը որպես պետական լեզու պահպանելը: 1968թ. քվեարկությամբ կազմակերպության ղեկավար է դառնում Հովիկ Վասիլյանը: Նույն թվականին կազմակերպության ջանքերով սկսվում է համանուն ամսագրի տպագրությունը: Կազմակերպության գործունեության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որը նրա անդամները գաղտնիությունը ապահովելու նպատակով որոշում են հանդես գալ ծածկանուններով<sup>2</sup>: Դա, սակայն, չխանգարեց բացահայտելու կազմակերպության անդամներին, ովքեր 1968 թվականին ձերբակալվեցին, իսկ արդեն 1969թ. փետրվարին դատապարտվեցին տարբեր տարիների ազատազրկման:

Այնուամենայնիվ, ընդհատակյա հասարակական-քաղաքական գործող կազմակերպություններից ամենազդեցիկն ու ամենակենսունակը «Ազգային միացյալ կուսակցությունն» է (ԱՄԿ): Հայաստանում հետստալինյան ժամանակաշրջանի քաղաքական կյանքի, ինչպես նաև անկախացումից հետո ձևավորված բազմակուսակցական համակարգի և քաղաքական ընդդիմության ձևավորման վերաբերյալ ուսումնասիրություններում առանցքային տեղ է գրավում այս կուսակցության ընդհատակյա գործունեությունը<sup>3</sup>: Մեծ է ԱՄԿ-ի ազդեցությունը այդ

<sup>1</sup>Տե՛ս Վ. Հարությունյան, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Եր., 2014, էջ 31-48:

<sup>2</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 50:

<sup>3</sup>Տե՛ս Հ. Աբրահամյան, Անցումը միակուսակցական համակարգից բազմակուսակցականության Հայաստանի Հանրապետությունում որպես ժողովրդավարական կարևոր գործոն // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես (գիտական հոդվածների

տարիներին (1960-ականների երկրորդ կես) և դրանից հետո այլախոհների և այլախոհական կազմակերպությունների վրա:

Ազգային միացյալ կուսակցությունը հիմնադրվել է 1966 թվականին Երևանում Երկրորդ աշխարհամարտի մասնակից, «Փառքի» 3-րդ աստիճանի շքանշանակիր, մասնագիտությամբ նկարիչ Հայկազ Խաչատրյանի և նրա երկու համախոհների՝ ուսանողներ Շահեն Հարությունյանի (մանկավարժական տեխնիկումի 5-րդ կուրս) և Ստեփան Զատիկյանի (պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրս) կողմից: ԱՄԿ-ի հիմնադիրները միմյանց ծանոթացել և մտերմացել էին Երևանի թիվ 1 քննչական մեկուսարանում 15-օրյա կալանքը կրելիս, որի պատճառը 1966թ. ապրիլի 24-ին ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված երթին մասնակցելն էր: Իսկ արդեն 1967թ. ապրիլի 24-ին նրանք պատրաստում և տարածում են «Փարոս» վերնագրով թռուցիկի 200 օրինակ, որտեղ տպագրված էին Շահեն Հարությունյանի և Հայկազ Խաչատրյանի «Ապրիլի 24» և «Հայ ժողովրդին» հոդվածները<sup>1</sup>: Նույն թվականի հոկտեմբեր ամսին ԱՄԿ-ի հիմնադիր երեք անդամները նախաձեռնում են կուսակցության ընդհատակյա թերթի տպագրությունը, որը նույնպես կոչվեց «Փարոս»: Այն ԱՄԿ տպագիր օրգանն էր և առաջին օրինակը ուներ 200-ից ավելի տպաքանակ: «Փարոսի» առաջին համարում տպագրվեցին հայրենասիրական բնույթի հոդվածներ («Հայ ժողովրդին», «Ելնում են նորերը», «Հայաստանը լծի տակ»), որոնց հեղինակներն էին Խաչատրյանը, Զատիկյանն ու Հարությունյանը: Հոդվածներում արծարծվում էին հայրենասիրական գաղափարներ, ներկայացվում էր հայ ժողովրդի վիճակը և կոչ էր արվում պայքարել «Ազատ և անկախ Հայաստան» ստեղծելու համար:

ԱՄԿ-ի գործունեության կանոնակարգման և ներկազմակերպական համախմբվածության համար չափազանց կարևոր իրադարձություն էր կուսակցության կանոնադրության, ծրագրի և երդման տեքստի մշակումը<sup>2</sup>: ԱՄԿ-ի կանոնադրության մեջ նշվում է կազմակերպության ժողովրդավարական լինելու, ինչպես նաև միլիտարիզմից, ազգայնականությունից, դիկտատուրայից, ռասայական խտրականությունից և միջազգային օրենքների կոպիտ խախտումներից հրաժարվելու մասին<sup>3</sup>: Ուշադրության են արժանի ԱՄԿ ծրագրի 2-4 կետերը, որոնցում արծարծվում են ազգերի խաղաղ գոյակցության և վիճելի հարցերը փոխադարձ զիջումների և հարգանքի միջոցով կարգավորելու առաջադեմ գաղափարներ: Հաջորդ կետով կարևորվում է Ազատ և Անկախ Հայաստանի անհրաժեշտությունը՝ որպես լիարժեք ազգ և պետություն կոչվելու գրավական: ԱՄԿ-ի կանոնադրության ամենակարևոր կետը, որ հեղինակները

ժողովածու), Եր., 2013, էջ 5: **Ananyan A. and Careja R.** Formation and Development of Political Opposition in Armenia // *Stumbling But Struggling: Political Opposition in Four Post-Soviet Countries* (ed. by R. Careja), Moscow, 2004, p. 165.

<sup>1</sup>Տե՛ս Ա.Մանուկյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>2</sup>Տե՛ս Ա.Մանուկյան, նշվ. աշխ., էջ 90-102, Վ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 79-83:

<sup>3</sup>Տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 90-91:

ամբողջությամբ գրել են մեծատառերով (ինչով էլ և ընդգծել են այս կետի կարևորությունը), վեր է հանում ԱՄԿ-ի հիմնական խնդիրը. «Ազատագրել ազգը օտարի լծից, դուրս գալ Ռուսաստանի ստրկատիրական գերիշխանությունից, Հայաստանը դարձնել ազատ, անկախ, քաղաքական չեզոք հանրապետություն»<sup>1</sup>: ԱՄԿ ծրագրի մյուս կետերից ուշադրության է արժանի 9-րդը, որտեղ նշվում է, որ հայ ժողովրդի ստեղծած բարիքների և երկրի ընդերքի ողջ բարիքների միակ տերն ու տնօրինողը պետք է լինի հայ ժողովուրդը: 11-րդ կետով պահանջվում է Ռուսաստանից խաղաղ ճանապարհով վերադարձնել ապօրինաբար Ադրբեջանին և Վրաստանին հանձնված հայկական հողերը, 12-րդը՝ վերականգնել ազգային բանակը և այն զինել առաջնակարգ զենքով: Եզրափակիչ՝ 15-րդ հոդվածով ԱՄԿ-ականները իրենց սրբազան պարտքն են համարում պայքարել Հայ դատի արդար լուծման և Արևմտյան Հայաստանի ազատագրման համար, ուր կվերադառնան 3 միլիոնից ավելի հայեր աշխարհի տարբեր ծայրերից, և որը կարևոր դերակատարություն կունենա Միջին Արևելքում և ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատման գործում<sup>2</sup>: Այսպիսով, ԱՄԿ-ի ծրագիրը ուղենշում է կուսակցության նպատակներն ու պայքարի մեթոդները, ինչից կարելի է եզրակացնել, որ կուսակցության անդամների գաղափարների ձևավորման վրա ազդեցություն են ունեցել ինչպես ԽՍՀՄ ողջ տարածքում գործող այլախոհական շարժումների ընդհանուր ոգին, այնպես էլ օտար լծից ազատվելու, պատմական Հայաստանի ազատագրման ազգային-ազատագրական պայքարի գաղափարները:

1968թ. հուլիսի 11-ին՝ ԱՄԿ-ի հիմնադիրների ձերբակալությունից հետո, կուսակցության փաստացի ղեկավարը դարձավ Պ. Հայրիկյանը, ով այդ ժամանակ ԱՄԿ-ի երիասարդական կառույցի՝ «Շանթ»-ի ղեկավարն էր: ԱՄԿ-ի գործով մեղադրվողների ձերբակալությունները տեղի են ունենում 1969թ. մարտ-օգոստոս ամիսներին: Իսկ արդեն 1970թ. փետրվարին կայացած դատավարությամբ Պ. Հայրիկյանը, Ա. Նավասարդյանը, Հ. Աշիկյանը, Ռ. Բարսեղովը և Ա. Խաչատրյանը մեղավոր են ճանաչվում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի առաջին մասով և 67 հոդվածով («հակասովետական քարոզչություն», «հակասովետական կազմակերպության անդամակցություն»):

1970-ականներին ակտիվ գործունեություն ծավալեցին ինչպես կալանավայրից վերադարձած, այնպես էլ կուսակցության շարքերը նոր համալրած ԱՄԿ-ականները: Նրանք շարունակեցին ազգային բովանդակությամբ թռուցիկների, ինչպես նաև ԱՄԿ-ի պաշտոնաթերթ «Փարոս»-ի տպագրությունն ու տարածումը: 1970-ականների կարևոր իրադարձություններից էր նաև ԱՄԿ-ի կառույցների վերաաշխուժացումը: Այդ

<sup>1</sup>Տե՛ս նույն տեղը, էջ 45, 91-93:

<sup>2</sup>Տե՛ս Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 80-81:

նպատակին հասնելու համար կարևոր քայլ էր ԱԿՄ խորհրդի ստեղծումը: Վերանայվեց նաև ԱՄԿ ծրագիրը, շրջանառության մեջ դրվեց հանրաքվեի միջոցով անկախության հասնելու ռազմավարությունը, որը, անխոս, առաջադեմ մոտեցում էր և համահունչ ժամանակի պահանջին:

Այս տարիներին, բացի ազգային բնույթի այլախոհական դրսևորումներից, Հայաստանում ձևավորվում են նաև իրավապաշտպան կազմակերպություններ: Ամբողջ խորհրդային Միության տարածքում իրավապաշտպանական շարժումների գործունեության մեջ կարևոր իրադարձություն էր 1975թ.-ին Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի Հելսինկյան եզրափակիչ ակտի<sup>1</sup> ընդունումը, որի տակ իր ստորագրությունն ամրագրեց նաև ԽՍՀՄ-ն՝ ի դեմս ԽՄԿԿ Գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևի: Ընդհանուր առմամբ այդ փաստաթղթի ուղղվածությունը կարելի է բաժանել երեք ոլորտների՝ քաղաքական, տնտեսական և հումանիտար: Փաստաթղթին միացած երկրները պարտավորվում էին ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը իրենց երկրի սահմաններում: Արևմտյան երկրները ձգտում էին միջազգայնացնել վերահսկողությունը մարդու իրավունքների խախտումների նկատմամբ, ինչի հետևանքով այն կդադարեր միայն ներքին քաղաքականության խնդիր լինելուց:

Հելսինկյան եզրափակիչ ակտի ընդունումից ամիսներ անց կազմավորվեց Մոսկովյան հելսինկյան խումբը, որին հետևեց նմանատիպ խմբերի ձևավորումները Ուկրաինայում, Լիտվայում, Հայաստանում և Վրաստանում: Հայաստանի Հելսինկյան խումբը հիմնադրվեց 1977թ.-ի ապրիլին Ռոբերտ Նազարյանի գլխավորությամբ: 1978թ.-ի դեկտեմբերի 1-ի դատավճռով Նազարյանը մեղադրվում է 1976-1977 թվականներին հակասովետական ակտիվ քարոզչություն իրականացնելու համար<sup>2</sup>:

Եվ, վերջապես, խոսելով հետստալինյան ժամանակաշրջանի այլախոհական շարժումների մասին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այնպիսի երևույթի վրա, ինչպիսին է «սամիզդատը» (ինքնահրատ), որը խորհրդային իշխանության դեմ ծավալված պայքարի միջոցների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում: Քանի որ իշխանությանը անընդունելի քաղաքական գաղափարները չէին կարող պաշտոնապես տպագրվել խիստ գրաքննության պատճառով, այլախոհները օգտագործում էին դրանց տպագրության և տարածման ինքնուրույն եղանակ: Ինքնահրատի մեխանիզմը պարզ էր. հեղինակը իր նյութը մի քանի տարբերակով տպագրում էր գրամեքենայի միջոցով, որից հետո բազմացնում էր ու բաժանում համախոհներին: Եթե վերջիններս հավանում

<sup>1</sup>Տե՛ս <https://www.osce.org/mc/39501?download=true>

<sup>2</sup>Տե՛ս Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 70:

էին տվյալ աշխատանքի բովանդակությունը, նույնպես բազմացնում ու տարածում էին<sup>1</sup>: Տեղեկատվության փոխանցման այս մեթոդը նորություն չէր Խորհրդային Միությունում, սակայն հենց 60-ականների երկրորդ կեսին դարձան ԽՍՀՄ քաղաքական կյանքի կարևոր իրողություններ:

Գորբաչովյան «վերակառուցման» տարիներին այլախոհական շարժումները կորցրին իրենց արդիականությունը և աստիճանաբար մարեցին: Հռչակված «հրապարակայնության» և «ժողովրդավարության» պայմաններում այլախոհները հնարավորություն ստացան բացահայտ ներկայացնելու իրենց քաղաքական հայացքները: Այս գործընթացը, սակայն, պառակտեց այլախոհների շարքերը Հայաստանում: Կորցնելով ընդհանուր հակառակորդին՝ ի դեմս Խորհրդային իշխանության, այլախոհական շարժումները, մասնավորապես՝ ԱՄԿ-ը, բաժանվեց մի քանի ճյուղի և միասնական հանդես չեկավ 1988 թվականից սկիզբ առած համազգային շարժման ընթացքում:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ սոցիալիստական գաղափարների պետական երկարամյա քարոզչությանը զուգահեռ՝ հայ հասարակության վրա մեծ ազդեցություն ունեին նաև այլախոհական շարժումները հայրենասիրական, ազգային, ինչպես նաև իրավապաշտպանական գաղափարների վերաիմաստավորումն ու մատուցումը: Այս ամենի շնորհիվ Խորհրդային Հայաստանում ձևավորվել էր քաղաքականապես գործուն հասարակություն: ՀԽՍՀ բնակչությունը տիրապետում էր այնպիսի ժողովրդավարական հասկացությունների, ինչպիսիք են ազգերի ինքնորոշման իրավունքը, խոսքի և մտքի ազատության իրավունքը, ազատ և համընդհանուր ընտրությունների միջոցով պետական կառավարման մարմինների կազմավորումը և այլն: Դրանց շնորհիվ Խորհրդային Միության վերջին տարիներին իշխանության համար պայքարը Հայաստանում ուներ ժողովրդավարական բնույթ: Հայ հասարակությունը դրսևորեց բացառիկ քաղաքական հասունություն և զսպվածություն 1988թ. համազգային շարժման կազմակերպման գործընթացում, որն աննախադեպ էր ամողջ ԽՍՀՄ տարածքում: Վեր հանելով Լեռնային Ղարաբաղը մայր հայրենիքին վերամիավորվելու խնդիրը՝ Խորհրդային Հայաստանի քաղաքացիները 1988թ. իսկական հեղափոխություն իրականացրին, և սկսվեց ազգային-ազատագրական պայքար հանուն ազատության և անկախության:

<sup>1</sup>Տե՛ս նշվ. աշխ., էջ 210:



**Александр Саргсян, Проявления оппозиционной деятельности в Советской Армении** - Статья обращается к истокам возникновения и относительного развития оппозиционной деятельности в Советской Армении, а также к основным формам ее проявления. В статье исследуются внутрисистемные факторы, повлиявшие на возникновение в Советском Союзе инакомыслия, представляется типология диссидентских движений (националистические, правозащитные и другие). Особое внимание уделяется эволюции диссидентских движений в Советской Армении, и на конкретных примерах представляются особенности оппозиционной деятельности.

**Alexander Sargsyan, Manifestations of opposition activity in Soviet Armenia** – The article focuses on the reasons of the origin and the relative development of oppositional activity in Soviet Armenia, as well as the basic forms of its manifestation. The structural factors that influenced the emergence of the Soviet dissident movements and the typology of the dissident movement (nationalist, human rights, etc.) are examined in the article. Particular attention is paid to the evolution of the dissident movement in Soviet Armenia, and by the examples the different features of the opposition activity in Soviet Armenia are presented.

**Ալեքսանդր Սարգսյան- ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ:**